

1000. 1000. 1000. 1000. 1000. 1000. 1000. 1000. 1000.

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

3) Երկարակեցութեան փիլիսոփայութեանը, 2) Տուբերկուլոզային պահանջանառութեանը:

ԵՐԿԱՐԱԼԵՑՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԾՈՒԹԻՒՆԸ, Ալս օրեւա
Փարիզում լուս տեսաւ՝ Ժան Ֆինով մի հետաքրքրական գիրք
և Երկար ապրելու փիլիսոփակութիւն» անունով, որ մեծ ուշա-
գրութեան արժանացաւ ընթերցող հասարակութեան կողմից
և իսկով թարգմանուեցաւ գերմաներէնի: Գրքի հեղինակը ա-
պացուցանում է, որ գոլութեան ընական պալմաններում մար-
դուս կեանքը պէտք է շատ աւելի երկարատև լինի, քան նա
է ներկայում: Եզր աճում է միան և տարուակ ընթացքում,
իսկ ապրում է 20 աարի, ձին աճում է մինչև հինգ տարին,
ապրում է մինչև 25, ուղարի համար համապատասխանող տա-
րիքն են 8 և 40, ի նկատի ունենալով, որ աճման տարիքի
ու կեանքի տարիքի թուերի միջին չարաբերութիւնը ամեն
գէպքերում հնգին է հաւասար, Ֆինոն հասնում է այն եղա-
կացութեան, որ կեանքի տարիքի ընական թիւը մարդուս
համար՝ հաւասար է հարիւր տարուան: Աւաղ, մարդս ամեն
ջանք գործ է դնում, որ կարճացնէ իւր կեանքը: Բայց և
այնպէս այս անքնականութեան գիտակցութիւնը սկսում է լու-
սաւորել մեր միտքը: Առողջաբանութիւնը մեծ լառաջն զիմու-
թիւններ է անում: Արդէն մինչև որոշ աստիճան լաջազուեց
ախալիսի զարհուրելի համաճարակների առաջն առնել, ինչ-
պիսիք էին հարինքը, քուերան և ալլն: Մի խօսքով, մարդ-
կալին կեանքի տեսողութեան միջին թիւը աճեց: Հեղինակը
վճռապէս հաստատում է արև՝ վիճակադրական տեղեկութիւն-
ների հիման վերաբ: Մարդկութիւնը սակալն դեռ մեծ ճիշ պի-
տի թափէ իւր կրքերի դիմ կուուելու համար: Կեանքը կար-
ճելու վերաբ ինչպէս երեսում է մեծ աղղեցութիւն ունի զա-

բեցուրը. սրտի հիւանդութիւնները, որոնք նորա գործածութեան հետևանքներն են, բաղմաթիւ մահուան դէպքեր են առաջ բերում, որոնք օր. Միւնխէնում կազմում են՝ բոլոր մահացութիւնների մի երրորդը: Չատ վասակար է նոյնպէս ծըլխախոտի գործածութիւնը: Բօննի մեծաքանակ հարիւրամեակ ծերերի մէջ վիճակագրութիւնը կարողացաւ մրան մի, ծխող գտնել, բայց նոցա թւեւմ սակաւ չէին նոքա, որոնք ալքոհոլ էին դործ դնում չափաւոր քննակութեամբ, իսկ լուսարինդացի վիրաբուժ Պօլիտիմանը գրեթէ ամեն օր «արբում էր» իւր 25 ամեակ հասակից մինչև 140 տարին, որին նորան լազողել էր հասնել Սակալն, ուսումնասիրողը հաւատում է, որ Պօլիտիմանը կարող էր աւելի մեծ հասակի հասնել, եթէ չխմէք: Հետաքրքրական է Ֆինօի ան միտքը, որպէս թէ վաղահաս մահը ներկալանում է առանձնապէս որպէս հետեանք ներշնչան: Մարդիկ հաւատացած են, որ երկար չեն կարող ապրել, ուստի և վաղ են մեռնում: Ֆինօն ամեն կերպ աշխատում է ոչնչացնել մահուան երկիւղը: Մահը իրականապէս գոլութիւն չունի: Կալ միան նիւթերի փոփոխութիւնները: Մարմինը բաղկացած է անթիւ ցանցերից, որոնցից իւրաքանչիւրն ունի իւր կեանքը և իւր անհատականութիւնը: Հասարակապեաական տէրութեան նման նոքա բաղկացնում են մի ամբողջ կաղմուածք, որ կոչում է մարդ: Ցանցերն անում են ու մեռնում անընդհատ: Մի հիւսուածքի մահով մեռնում է մարդու մի մասը: Մեր կազմուածքը մի ահազին հանգստարան է և մեր կեանքը՝ թաղումների շարք: Մահը չէ կարող կեանքն ընդհատել, սա թոլլ է տալիս կազմուածքը կազմող հիւսուածքներին, անկախօրէն աճել ու անունետև տէրութեան շղթաները թափում են նորանից: Պրօտօպլազմի մէջ ծածկուած է կեանքի բնութեան գաղտնիքն և ոժը: Պրօտօպլազմը բուսական թէ կենդանական թագաւորութեան մէջ չի կարող որ և է ձև ըսդունել բացի նոցանից, որոնք ներկալանում են որպէս ամբողջ կեանքի Փիզիքական հիմունքներ: Միան նոցա գունութեամբ կարելի է կապ գտնել գործարանաւոր և անգործարանաւոր թագաւորութեանց միջև: Հանքերին ենք պարտական մենք մեր ծագումով և հողին գառնալով, մենք վերադառնում ենք մեր կեանքի ստեղծական տարրերին: (Մօզակա):

ՑՈՒԲԵՐԿՈՒԼԵԶԱՅԻՆ, ՊԱՏՈՒԱՍՏ: Ֆրանսիական բժշկապետ Գալնօն, որ անձնուրացութեամբ պատուաստել է իրան

տուբէրկուլեօղով որպէս զի ապացուցանէ, թէ սխալ է Կօնի-
տէօրիան, որպէս թէ անասունի տուբէրկուլեօղը վարակիչ չէ
մարդու համար, հետեւեալ խօսակցութիւնն է ունեցել «Matim-
Աշազրի աշխատակցի հետ. «Ես, ասել է Գարնօն, անցեալ ե-
րեքշարթի (լուլիսի 15-ին ն. տ.) երկրորդ, առաջինից աւելի-
ծանր պատուաստն արեցի ինձ վերալ, վկաների ներկալու-
թեամբ ես ծախ թեխս կաշուի տակ ներմուծեցի կենդանու-
հրասուածքի տուբէրկուլեօղով վարակուած մասնիկ. Ներ-
կալում իմ մարմնի մէջ զտնւում է կովի տուբէրկուլեօղի-
բշտիկներ. Պնդում են, թէ ես ալս երկրորդ պատուաստը արի
նորա համար, որ առաջինը որպէս թէ անհետեանք է անցել.
Դա սխալ է:

Առաջին պատուաստը՝ կաշուի վերալ տուբէրկուլեօղի ու-
ռուցքներ տուեց, որի մասին ոչ մի կասկած չկալ ալլ ես լու-
լիսի 12-ից սկսած. Երկրորդ պատուաստը շատ ծանր է, ևս,
երեխ, 7—8 շաբաթից կմեռնեմ. Հենց որ կերնան տուբէրկու-
լեօղի ներդադին հանգուցների հարուածները, ես ինձ կլան-
ձնեմ լաւագուն վիրաբուժներից մէկին, լուսալով, որ վատ վախ-
ճանի, դէպքում ձեռքս կանդամահատէ. Ես դիտաւորութիւն
չեմ ունեցել ինքնապանութիւն գործել, բայց ուզեցի ապա-
ցուցանել, որ իմ համոզմունքը՝ թէ անասունի տուբէրկուլե-
օղը վարակիչ է՝ ծմբարիտ է: Ձեռքս արդէն ցաւում է, և մատ-
ներս ուռել են և ազատ չեն կարողանում շարժուել. Ես հան-
գիստ հոգւով սպասում եմ վերջնական հետեանքին. (Խօ. Օօ.)

Քարդ. օր. ՆՈՒՅՈՐԴԻ ԱՂԱՎԱՆԵԱՆ